

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2017 թվականի N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1474-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրությունը հաստատելու մասին» N 1474-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետում «բուսաբանության» բառից առաջ լրացնել «Ա. Թախտաջյանի անվան» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել «ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխության կատարումը և օրենքով սահմանված կարգով գրանցումը՝ նշված պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1474-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1474-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ ԳԱԱ և ՌԴ ԳԱ ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի՝ Հայաստանում բուսաբանական գիտության հիմնական ուղղությունների (կարգաբանություն, մորֆոլոգիա, անատոմիա, երկրաբուսաբանություն, հնէաբուսաբանություն, կարիոլոգիա, պալինոլոգիա) ստեղծման և զարգացման գործում ծանրակշիռ ներդրումով:

Կարգավորման նպատակը և բնույթը

XX դարի ականավոր բուսաբան, ֆիլոգենետիկ և էվոլյուցիոնիստ Արմեն Թախտաջյանն (1910-2009թթ.) իր արգասաբեր գիտական գործունեությամբ ակնառու ներդրում է ունեցել բուսաբանական գիտության զարգացման գործում սկզբում Հայաստանում, այնուհետև Ռուսաստանում, ապա նաև ողջ աշխարհում:

Արմեն Թախտաջյանը, 34 տարեկանում դառնալով Բուսաբանության ինստիտուտի տնօրեն, իսկ 35-ում՝ ԳԱ թղթակից անդամ, ձեռնամուխ եղավ Հայաստանում աճող բոլոր բուսատեսակների մասին հիմնարար և հանրագիտարանային աշխատության ստեղծմանը: «Հայաստանի ֆլորա» բազմահատորյակի (1954-2010թթ.) առաջին հատորը ամբողջությամբ պատրաստել է Ա. Թախտաջյանը, միաժամանակ զբաղվելով կարգաբանների կադրերի պատրաստմամբ:

Հետագա տարիներին նա աշխատել է Լենինգրադում (Սանկտ Պետերբուրգ), որպես Լենինգրադի համալսարանի կենսաբանության և հողագիտության ֆակուլտետի դեկան, ապա ԽՍՀՄ ԳԱ Վ. Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն:

Արմեն Թախտաջյանը ողջ կյանքում կապված է եղել Հայաստանի հետ: Կազմակերպել է բուսաբանական գիտարշավներ, շարունակել է խմբագրել

«Հայաստանի ֆլորան» բազմահատորյակը: Ակադեմիկոս Ա. Թախտաջյանը ստեղծել է հայ բուսաբան-կարգաբանների գիտական դպրոց:

Արմեն Թախտաջյանը հեղինակ է համաշխարհային կարևորություն ունեցող «Երկրի ֆլորիստիկական մարզերը» գիտական աշխատության, որի համար 1981 թվականին նրան շնորհվել է ԽՍՀՄ պետական մրցանակ, իսկ բուսական աշխարհի էվոլյուցիայի նպատակասլաց ուսումնասիրության արդյունքում մշակել է բարձրակարգ բույսերի ինքնատիպ համակարգ, որի համար արժանացել է ԽՍՀՄ Կոմարովյան մրցանակի:

Նա հանդիսացել է “Ботанический журнал” (Սանկտ Պետերբուրգ) հանդեսի գլխավոր խմբագիր, Հայկական աշխարհագրական ընկերության նախագահ, Համամիութենական բուսաբանական ընկերության նախագահ, Լոնդոնի Լինեյի ընկերության արտասահմանյան անդամ, Հնդկաստանի հնէաբուսաբանական ընկերության պատվավոր անդամ, ԱՄՆ-ի, Նորվեգիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի գիտությունների ակադեմիաների արտասահմանյան անդամ, «Լեոպոլդինա» գերմանական բնագիտության ակադեմիայի անդամ:

Բնական գիտությունների բնագավառում ունեցած ակնառու նվաճումների, երկարամյա և բեղմնավոր գիտական գործունեության համար Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արմեն Թախտաջյանը 2009 թվականին ՀՀ Նախագահի կողմից պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից:

Ակնկալվող արդյունքը

ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտը ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի անունով կոչելը կնպաստի հայ ականավոր գործչի՝ ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի գիտական մեծ վաստակի ճանաչմանը և գնահատմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1474-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1474-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1474-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1474-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1474-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Առարկության, առաջարկության հեղինակը, փաստաթղթի ամսաթիվը, համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p align="center">ՀՀ արդարադատության նախարարություն 27.04.2017թ. N 01/19.2/6800-17</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին</p>		
<p align="center">ՀՀ ֆինանսների նախարարություն 19.04.2017թ. N 01/83-2/6819-17</p>	<p>Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել «ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ համապատասխան լրացման կատարումը և օրենքով սահմանված կարգով գրանցումը՝ նշված պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին»</p>	<p align="center">Ընդունվել է</p>	<p align="center">Կատարվել է համապատասխան լրացում</p>